

ԿԱՐԾԻՔ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ

Սյուզաննա Ժուլվերնի Եղիազարյանի «ՀՀ մարզերի ուսանողների զբաղվածության հիմնախնդիրները» թեմայով, ներկայացված

ԻԲ-00.01-«Սոցիոլոգիական հետազոտությունների մեթոդաբանություն, տեսություններ, սոցիալական տեխնոլոգիաներ և գործընթացներ» մասնագիտությամբ սոցիոլոգիական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

1. Ատենախոսության թեմայի արդիականությունը

Ատենախոսությունում գիտական պատշաճ վերլուծության է առնված ժամանակակից սոցիոլոգիական քննախոսության և հետխորհրդային Հայաստանի երիտասարդության համար մեծ կարևորություն ունեցող հիմնախնդիրներից ՀՀ մարզերի ուսանողների զբաղվածության հիմնախնդիրները: Հաշվի առնելով այն հանագմանքը, որ մինչ այժմ ՀՀ-ում երիտասարդների սոցիալ-տնտեսական, մշակութային հիմնախնդիրների բացահայտման նպատակով իրականացված հետազոտությունները հատվածային բնույթ են կրել, ատենախոսության թեման խիստ արդիական է:

Աշխատանքում համապարփակ վերլուծվել են ՀՀ աշխատաշուկայում առկա հիմնախնդիրներին նվիրված հետազոտությունների արդյունքները, որոնք համալրվել են ուսանողների զբաղվածության հիմնախնդիրների խորքային ուսումնասիրության տվյալներով:

Հեղինակի կողմից իրականացված խորքային վերլուծությունը արժեքավոր և նշանակալից նյութ է առաջարկում ոչ միայն ՀՀ մարզերի ուսանողների զբաղվածության հիմնախնդիրների ուսումնասիրության, այլ նաև դրանց

հաղթահարման վերաբերյալ, մասնավորապես՝ արժեքավոր է աշխատանքում ներկայացված սոցիալական գործընկերության ցանցային մոդելը:

2. Ատենախոսության նպատակը և խնդիրները

Ատենախոսության նպատակն է բացահայտել Հայաստանի Հանրապետության երիտասարդների՝ ի դեմս մարզային ուսանողների զբաղվածության հիմնախնդիրները: Վերոհիշյալ նպատակից բխող խնդիրների շարքում սահմանվել է ուսանող երիտասարդների զբաղվածության և աշխատանքի տեղավորման խնդիրների վերհանումը, ուսանողների՝ որպես առանձին ենթամշակույթ ունեցող սոցիալական խմբի առանձնահատկությունները, բուհ-ուսանող-գործատու կապի արդյունավետ կիրառման խոչընդոտների բացահայտումը, ուսանողների կրթական գործընթացի՝ արդյունավետ կազմակերպմանը խոչընդոտող գործոնների վերհանումը, ինչպես նաև ուսանողների զբաղվածության կարգավորման գործում պետության դերակատարության բացահայտումը:

3. Հետազոտության արդյունքները և ատենախոսության գիտական նորույթը

Ատենախոսության գիտական նորույթը պայմանավորված է հետևյալ արդյունքներով՝

- Վերլուծված և բացահայտված են բուհից աշխատաշուկա բարձրորակ մասնագետների անցումն ապահովող և կրթության որակի վրա դրական ազդեցություն ունեցող զբաղվածության մոդելները: Առաջարկված է նորը, որը հնարավոր է տեղայնացնել ՀՀ-ում:
- Առաջին անգամ էմպիրիկ տվյալների հիման վրա համակարգված ձևով ներկայացված են մարզային ուսանողների հիմնախնդիրները՝ կապված ինչպես անցած տասնամյակներում, այնպես էլ ներկայիս զբաղվածության և գործազրկության հետ:

- Միջազգային առաջավոր փորձի ուսումնասիրության և հեղինակի կողմից կատարված հետազոտությունների հիման վրա մշակված է ՀՀ մարզերի ուսանողների զբաղվածության աստիճանի բարձրացման միջոցառումների նախագիծ:
- Ուսումնասիրված և բացահայտված են կոնկրետ մասնագիտության կողմնորոշման և մասնագիտությամբ աշխատանք գտնելու ուղիղ համեմատական կապերը:
- Նորովի է ներկայացված երիտասարդների՝ մասնագիտական կողմնորոշման մեթոդաբանությունը՝ կարևորելով աշխատատեղի ու դերի ընտրության, մասնագիտական աճի ապահովման գործընթացը:
- Բացահայտված են մի շարք գործոններ, որոնք խոչընդոտում են դիպլոմավորված մասնագետներին՝ իրենց տեղը գրավելու աշխատաշուկայում:
- Արժեքավոր է ատենախոսի կողմից «տնտեսական նպատակահարմարություն» եզրույթի բովանդակության վերլուծությունը:

4. Ատենախոսության արդյունքների գործնական և գիտական նշանակությունը

Ատենախոսությունն ունի գիտական և կիրառական նշանակություն, քանի որ ստացված արդյունքները կարող են նպաստել ինչպես պետական քաղաքականության ոլորտում արդյունավետ որոշումների ընդունմանը, այնպես էլ ապագա տեսամեթոդաբանական գիտական հետազոտությունների կայացմանը: Ատենախոսության հարուստ տեսական հատվածը կարող է մեծապես օգտակար լինել ոլորտին վերաբերող ուսումնակրթական ձեռնարկների և դասընթացների մշակման ընթացքում:

5. Ատենախոսության կառուցվածքը և ծավալը

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, ինն ենթագլխից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից, երեք հավելվածից: Ներածության մեջ հիմնավորվել է թեմայի արդիականությունը, ներկայացվել է հետազոտության թեմայի ուսումնասիրվածության աստիճանը, ձևակերպվել են հետազոտության նպատակն ու խնդիրները, ատենախոսության հիմնական վարկածները, ամփոփվել են ատենախոսության տեսամեթոդաբանական հիմքերը, ներկայացվել են հետազոտության գիտական նորույթը և պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները:

Ատենախոսության առաջին գլխում ներկայացված է հետխորհրդային Հայաստանում բարձրագույն կրթությունը և աշխատաշուկան, բուհ-աշխատաշուկա կապը, ինչպես նաև պետական քաղաքականության դերը Հայաստանում զբաղվածության կարգավորման գործում:

Ատենախոսության երկրորդ գլխում վերլուծված են բուհ-աշխատաշուկա համագործակցության հիմնախնդիրները Հայաստանում:

Ատենախոսության երրորդ գլխում ամփոփված են ՀՀ մարզերի ուսանողների զբաղվածության հիմնախնդիրների ուսումնասիրության արդյունքները Գավառի պետական համալսարանի դեպքի ուսումնասիրության օրինակով:

«Եզրակացություն» բաժնում հեղինակը ներկայացրել է ատենախոսության հիմնական արդյունքները:

6. Դիտողություններ և առաջարկություններ ատենախոսության վերաբերյալ

Ատենախոսական աշխատանքը գերծ չէ որոշ թերություններից՝

- Աշխատանքում «զբաղվածության խնդիր» և «զբաղվածության հիմնախնդիր» հասկացությունները կիրառվել են որպես համարժեք հասկացություններ, ինչն այնքան էլ հասկանալի չէ: Բացի այդ, աշխատանքում հիմնավորված չէ

վերոնշյալ հասկացությունների՝ կամայականորեն եզակի կամ հոգնակի թվով օգտագործումը:

- Աշխատանքն էականորեն կշահեր, եթե հեղինակը ներկայացներ «զբաղվածություն» եզրույթի և վերջինիս հասկացությամբ ապարատում ներառված հիմնական հասկացությունների բովանդակության առավել համակարգված վերլուծություն:
- Աշխատանքում տեղ են գտել ձևակերպման անհարթություններ, ինչպես օրինակ՝ «խոչընդոտող հարցեր» (էջ 12), «հասարակական սոցիալականացում» (էջ 33), «անապարապության ապահովում» (էջ 43), «վատ իրազեկում» (էջ 106), «ցածր մասնագիտական կարողություններ և հմտություններ» (էջ 106) և այլն:
- Էջ 135-ում հեղինակը նշում է, որ *«...աշխատանքում հետազոտվել են արտասահմանյան բուհերի կրթական համակարգերը և փորձ է արվել համեմատական վերլուծություն անել»*: Սակայն աշխատանքում նման վերլուծությունը ըստ էության բացակայում է, փոխարենը առկա է զբաղվածության պետական քաղաքականության արևմտաեվրոպական երկրների փորձի համեմատական վերլուծություն (էջ 44-48):
- Վիճելի է հեղինակի կողմից առաջ քաշված այն պնդումը, ըստ որի՝ *«...մասնագիտության սխալ ընտրության պատճառով է, որ Հայաստանի ոչ հասարակական-քաղաքական, ոչ տնտեսական հարաբերությունները առողջ և բնականոն չեն»*: Անշուշտ, մասնագիտության սխալ ընտրությունը կարող է բացասական ազդեցություն ունենալ հասարակական-քաղաքական, տնտեսական հարաբերությունների վրա, բայց վերոհիշյալ հարաբերությունների վրա ազդում են այլ գործոններ ևս:
- Նախընտրելի էր օգտագործված գրականության ցանկում ներառված տպագիր աղբյուրները ներկայացնել այբբենական կարգով: Բացի այդ, օգտագործված գրականության ցանկում ներառված 23-րդից մինչև ներառյալ 49-րդ համացանցային աղբյուրների վերաբերյալ տեղեկատվությունը ամբողջական

չէ, մասնավորապէս՝ նշված է միայն համացանցային հղումը, իսկ հղման ներքո ներկայացված նյութի անվանումը կամ վերնագիրը բացակայում է:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Նշված թերությունները չեն նսեմացնում ատենախոսական աշխատանքի գիտական արժեքը և վերջինիս միանշանակորեն դրական գնահատականը:

Ատենախոսի կողմից հրատարակված աշխատություններն արտացոլում են ատենախոսության հիմնական դրույթները: Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են ինչպէս տեղական, այնպէս էլ միջազգային գիտական ամսագրերում հեղինակի հրապարակած 13 (տասներեք) հոդվածներում: Սեղմագիրն արտացոլում է աշխատանքի հիմնական բովանդակությունը և հեղինակի հիմնական ձեռքբերումները:

Ատենախոսության հիմնական արժանիքներից է ուսումնասիրվող բարդ հիմնախնդիրների հստակ և համակարգված վերլուծությունն ու դրանց զարգացման ներքին տրամաբանության բացահայտումը: Հեղինակը ցուցաբերում է ժամանակակից սոցիոլոգիայի հիմնախնդիրների վերլուծության համար անհրաժեշտ ինչպէս նեղ մասնագիտական, այնպէս էլ ընդհանուր հասարակագիտական պատշաճ գիտելիքներ: Ատենախոսական աշխատանքը ձևակերպված է բարեխղճորեն և գրագետ, առաջ քաշված մեթոդաբանական և մեթոդական խնդիրները լուծված են:

Սյուզաննա Ժուլվերնի Եղիազարյանի «ՀՀ մարզերի ուսանողների զբաղվածության հիմնախնդիրները» թեմայով ԻԲ.00.01-սոցիոլոգիական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսությունը ավարտուն գիտահետազոտական աշխատանք է, որը վերաբերում է տեսամեթոդաբանական և գործնական առումով արդիական թեմայի: Թեկնածուական ատենախոսությունը բավարարում է ՀՀ ԲՈԿ-ի «Հայաստանի

Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» պահանջներին:


Ելնելով վերոշարադրյալից՝ գտնում եմ, որ ատենախոսության հեղինակ Ս.Ժ.Եղիազարյանը արժանի է ԻԲ.00.01 - «Սոցիոլոգիական հետազոտությունների մեթոդաբանություն, տեսություններ, սոցիալական տեխնոլոգիաներ և գործընթացներ» մասնագիտությամբ սոցիոլոգիական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս՝

Սոցիոլոգիական գիտությունների թեկնածու,

ԵՊՀ Սոցիալական աշխատանքի և սոցիալական տեխնոլոգիաների ամբիոնի
ասիստենտ


Մ.Ս. Յարմալոյան



Տիկին Մ.Ս. Յարմալոյանի ստորագրության իսկությունը հաստատում եմ.

Երևանի պետական համալսարանի գիտական քարտուղար՝ Բ.Գ.Թ. ղոցենտ

Մ.Վ. Հովհաննիսյան



6 նոյեմբերի 2024թ.

